Համաձայնագիր-2
27.02.2015թ. կնքված N ՀՀ ՖՆ ԲԸԱՀԾՁԲ-04/15-1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան **« 30 » հունվարի 2017թ.**

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի մի կողմից, և «Յուքոմ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Կ.Ասատուրյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 27.02.15թ. կնքված N ՀՀ ՖՆ ԲԸԱՀԾՁԲ-04/15-1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 2017 թվականին մատուցվելիք ծառայությունների առավելագույն գինը սահմանել 45 000 000 (քառասունհինգ միլիոն) ՀՀ դրամ, որից 25 031 000 ՀՀ դրամի ֆինանսավորումը ՀՀ 2017 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ 19 969 000 ՀՀ դրամի ֆինանսավորումը ՀՀ ԿԱ ՊԵԿ 2017 թվականի արտաբյուջետային միջոցների հաշվին:

1.2. Երկարաձգել Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը, այն սահմանելով մինչև 2017 թվականի դեկտեմբերի 20-ը ներառյալ:

1.3. Հաստատել ՀՀ 2017 թվականի պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին մատուցվելիք ծառայությունների ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի/կցվում է/:

1.4. 27.02.15թ. կնքված N ՀՀ ՖՆ ԲԸԱՀԾՁԲ-04/15-1 ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պայմանները տարածել 2017 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտե	*«Յուքոմ» ՍՊԸ*
ք.Երևան, Մ.Խորենացու-3,7	*ք.Երևան, Տերյան 19, բն. 4*
ՀՎՀՀ 02647057	*ՀՎՀՀ 00024873*
Հ/Հ 900011054013	*«Ամերիաբանկ» ՓԲԸ*
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	*Հ/Հ 1570043102134100*
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝	...որպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար
Լ.Սահակյան	Կ.Ասատուրյան

Հավելված
Հաստատված է
27.02.2015թ. կնքված N ՀՀ ՖՆ ԲԸԱՀԾՁԲ-04/15-1 ծածկագրով
գնման պայմանագրի փոփոխությամբ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2017թ. պետական բյուջեով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
			Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Մինչև 2017 թ. դեկտեմբերի 25-ը	Ընդամենը Տարի
1	4214	Հեռախոսակապի ծառայությունների մատուցում		5 976 000	6 255 000	8 340 000	10 425 000	12 510 000	14 595 000	16 680 000	18 765 000	20 850 000	22 935 000	25 031 000	**25 031 000**

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտե
ք.Երևան, Մ.Խորենացու-3,7

ՀՎՀՀ 02647057
Հ/Հ 900011054013
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝
Ա.Սահակյան

ԿԱՏԱՐՈՂ
«Յուքոմ» ՍՊԸ
ք.Երևան, Տերյան 19, բն. 4
ՀՎՀՀ 00024873
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570043102134100

Որպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար
Կ.Ասատուրյան